

Տարեկան դիմ է 10 ռուբլի:
վեց ամսուանը՝ 5 ռ., երեք ամսուանը՝ 3 ռ., ամիսը 1 ռ.:
Առանձին համարներով իւրաքանչիւրը 5 կոպէկ:

Խմբագրատունը բաց է ամեն օր բացի կիրակի և տօն օրերից
առաւօտեան 11—2 ժամը կէսօրից յետ:

Օտարաբարբարացիք դիմում են ուղղակի խմբագրութեան հետեւեալ հասցեով. — В редакцію «Меру Азаттаму», по Тифлису, կամ Redaction de «Meghou Hahastani», à Tiflis. (Caucase).



Խմբագրութեանն ուղղած թէ յօդուածները եւ թէ նամակները պէտք է պարզ դրուած լինին գրողի ստորագրութեամբ եւ հասցեով: Խմբագրութիւնը կարող է փոփոխել, ուղղել եւ կրճատել յօդուածները: Խմբագրութիւնը իւր վերայ չէ առնում յետ ուղարկել յօդուածները եւ պահում է երկու ամիս մինչեւ ցաւանդ:

Յայտարարութիւնների համար վճարում են ամեն մի թուին 2 կօպ: Յայտարարութիւններ ընդունվում են հայերէն եւ օտար լեզուներով: Յայտարարութիւններ ընդունվում են խմբագրատանը, Վրոկասու: Գիրքանոցի տակ պ. Տէր-Յովսէփեանի ծխախոտի խանութում են պ. Դանիելեանի պալիլիօնում:

«ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԵՂ»

Ա Ն Է Գ Ե Ն Դ Ե Ր Ե Մ Ե Ն Ե Ն

Երկու տարի շարունակ պարագայ-
լով տ. Ս. Բարայանցի «Մանկական
Պարտիզոն» պարտիզանուհւոյ
պաշտօնով հոգեւոր իշխանութեան
թղթուղտութեամբ հոգեւորական 1-ից
բանում եմ «Մանկական Պարտիզոն»
ամսագրի մասին: 4—6 տարեկան երե-
խաների համար, երկու տարեկան դա-
սերթացով: Ցանկացողները իրանց
մանուկներին Մանկական պարտիզ-
աններին պայմանների մասին կա-
րող են տեղեկանալ պ. Մարկո Տէր-
Սարգսեանից իւր տան մէջ ամեն
օր բացի տօն օրերից ճաշից յետոյ
4—6 ժամը:

Տեղեկանալ Տէր-Սարգսեանին:

Խմբագրութիւնս խնդրում
է այն բաժանորդներին, որոնք
դեռ ևս չեն վճարած լրագ-
րիս տարեկան բաժանոր-
դագինը, շտապեն փութով
հասցնել ա յ ն խմբագրու-
թեանս:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՐԿՈՒ ԽՕՍԻՐ.

«Մասիս» շաբաթաթերթի վերջին,
3734 հետ «Բաթիկ» և հայ վիպասա-
նութիւնը խորագրով մի յօդուած կար-
գացիք, որոյ առթիւ կամենում ենք
երկու խօսք ասել: Յօդուածագիրը պ.
Ա. Արփիարեանն է: Պարտիզ, ըստ վեր-
նագրին, ընդարձակապէս յօդուածը ըս-
կալում է այսպէս. «Երբ Պօլսի վերադա-
րայ թիֆլիզէն, ամեն բարեկամներս անմիջա-
կին կողովին հետեւեալ հարցումները. — տե-
սոր Բաթիկը. — Խօսակցեցիք հետը. — Ի՞նչ
պէս մտաւ է Ի՞նչ կընէ: Մինչեւ իսկ կա-
յին այնպիսիք (բաթիկ) որք երանի կարգա-
ցին այն աշուց (բաթիկ դարձեալ) որ արժա-
նի եղած էին հայ վիպասանը տեսնելու»:

Այստեղ որովհետեւ խնդրելը գրական-
նութեան մի նշանաւոր ձեւերն է վերա-
բերում, ուստի, մեր կարծիքով, հետա-
քեզի էր իմանալ թէ ի՞նչ ուսմանը են
պ. Ա. Արփիարեանի կ. Պօլսոյ բարե-
կամները: Արդեօք այնտեղի գրական
անձինքը, եթէ այդպէս է, ուրեմն միթէ
այդ անձինքը գրականութիւնից աչդ
աստիճան Էթիօփի, չէ Էթիօփի ևս ե-
ղել: Կարելի է գրական աշխարհից դու-
րան մարդիկ են պ. Արփիարեանի բարե-
կամները: Յայնչէպս դրանց համարումն
ու կարծիքները կարող են արդեօք պ.
Բաթիկին արժանաւորութեանը համար
գրական համարուիլ:— Զինք կարծում:

Պ. Ա. Արփիարեանը շարունակում է.
«Բաթիկի անունը Ռուսոյ հայոց մէջ ունէր
արդէն իւր մեծ նշանակութիւնը, իսկ առ մեզ
ժողովրդական եղաւ երբ «Արեւելի» մէջ
հրատարակեցին Բաթիկի Գրականութիւնը»:

Տողերիս գրողը, իւր ժամանակին, ա-
պացուցեց, որ «Բաթիկ» թիւնը» պ. Բաթի-
կի գրականութիւնից ամենից թոյլ ու ա-

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

Մի ակնարկ կրօնի վերայ. — Դա-
մակ խմբագրին. — Իմ համառօտ պա-
տասխանը:
Ներքին Տեսութիւն. — Թըղ-
թակցութիւն կ. Պօլսոյ:
Քաղաքական:
Բանասիրական. — Երկու խօսք:

ԹԻՖԼԻՍ, 7 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1884 թ.

ՄԻ ԱԿՆԱՐԿ ԿՐՈՆԻ ՎԵՐԱՅ.

I

Անժխտելի ճշմարտութիւն է, որ
կրօնը ազդերի կեանքի մէջ մեծ նը-
շանակութիւն ունի, նոցա բարոյա-
կան կրթութեան և ազգայնութեան
կապը պահպանելու վերաբերու-
թեանմբ, որովհետեւ ոչ մի զգաց-
մունք ազդերի մէջ այնպէս զօրեղ
չէ, ինչպէս կրօնականը մինչեւ ան-
գամ քաղաքականապէս յոյժ զար-
գացած ազգերի մէջ այդ զգացմուն-
քը շատ մեծ է: Մարդկութեան ամ-
բողջ պատմութիւնը վկայ է այս
անժխտելի ճշմարտութեան: Ամեն

ազգերի մէջ սկսած, ամենից քիչ
զարգացածներից մինչեւ ամենաքա-
ղաքակրթեալների մէջ, տեսնում ենք
ազգեցութիւնն ու նշանակութիւնն
այս մարդու բնածին զօրեղ զգաց-
մունքի, որ արտայայտվում է ար-
տաքին զօրեղ ձևերով:

Միթէ այդ զգացմունքի պտուղ
չէ՞ն այն հոյակապ շինուածքներն
որոնց մէջ ազգերն արտայայտվում են
իրանց կրօնական ջիւղեւաններով:
Նր հրապարակական ձևի ձևերով
զոհաբերութիւններով, ի հնունդն
մինչեւ անգամ մարդիկ զոհելով, որ
կրօնական զգացմունք չափազանցու-
թիւնն ու մեղեանդութեան հաս-
նելն է ցոյց տալիս. և յիրաւի ի՞նչ
զգացմունք կարող էր ծնողին ստի-
պել զոհելու իւր հարազատ զաւա-
կին:

Միթէ այդ զգացման զօրութեան
նշանն է՞, որ ամեն ազգերի մէջ ա-
մենամեծ գումարներն են զոհվել
կուռքերը ոսկուց: արծաթից շինե-
լու և թանկագին քարերով նրանց
զարդարելու համար այդ զգացմուն-
քի նշանն է՞, որ ամեն ազգերի մէջ

կուստուններում դիզած են եղել
անթիւ հարստութիւնը: Այդ կու-
ստուններն ազգերը կամայ հարստու-
թիւնը լցնում էին, մինչդեռ արքու-
նի դանձարանները լցվում էին միայն
հարկահանութեամբ և բռնութեամբ:
Ազգերի մէջ այդ զգացմունքն այն-
քան զօրեղ է եղել, որ մինչեւ ան-
գամ գիտութիւն և արհեստ էլ
նոքա ծառայեցրել են տաճարների և
հօքերի հոյակապութեան: Ինչ յի-
շատակարաններ կարող են իրանց
ճարտարապետական կատարելագոր-
ծութեամբ մրցել տաճարների և
կոքերի արձանների հետ. շատ քը-
չերը:

Մինչեւ այն աստիճան էր այդ ըզ-
գացմունքն, որ սա առանձին ձև
ճարտարապետութեան ստեղծեց տա-
ճարների համար, ըստ իրանց ճաշա-
կին աւելի հոյակապ և սրբութեան
յարմար, որ պէտք է տարբերվէր
աշխարհիկ շինութեանց ճարտարա-
պետական ոճից: Այն աստիճան զօ-
րեղ է եղած կրօնի ազդեցութիւնը
մի քանի ազգերի մէջ, որ մինչեւ
իսկ այդ ազգերի բոլոր բարոյական

և քաղաքական կեանք զեկաւարդն
է եղած. նաեւ կրօնի պաշտօնայք
ազգի վարչութիւնն իրանց ձևաբու-
մին են ունեցած: Եզրագծով քրմե-
րի դասը, Հնդկիներին, Հրէից քա-
հանայապետութիւնն ու Ղեւիի ցե-
ղը, իսկ քրիստոնէայ բոլոր ազգերի
կեկեղեկական դասը միջին դարերում
մանաւանդ Հռոմայ պապին իրանց
կեկեղեկականութեամբ կամ ազգերի
ամբողջ կեանքի զեկաւար են եղած
և կամ մեծ ազդեցութիւն ունե-
ցած են նոցա վեճակի վերայ, կրօ-
նական զգացմունքի շնորհիւ: Յայտ-
նի բան է այս նշանակութիւնը կրօ-
նի զանազան է եղած ազգերի մէջ,
ուստի և եկեղեցւոյ և սորա պաշ-
տօնականների դերն էլ մի և նոյնը աս-
տիճանով եղած չէ ամեն տեղ և
ամեն ազգերի մէջ — միայն նա ան-
շան չէ եղած ոչ մի ազգի մէջ:
Ուստի և թէ՛ Հին Ժամանակներն և
թէ՛ քրիստոնէութեան Ժամանակ ա-
մեն օրհնատու և քաղաքագետ ան-
ձինք միշտ ի հաշիւ են առած ազ-
գերի վերայ ազդող այս զօրեղ տար-
րին, ու նրան զօրք են դրած ազգե-
րի բարոյական կրթութեան և նոցա

մենից խայտառակն է: Պ. Գաւաթու-
րաֆիկին հրապարակաւ խոստացաւ մեր
կարծիքը ջրել: Բայց իւր խոստումը չը
կատարեց ցարդ: Ուրեմն մեզ համար
մինչ օրս էլ մեր կարծիքը ուղիղ է:
Արդ՝ ըստ պ. Արփիարեանի, որովհե-
տեւ պ. Բաթիկին մէկ գլուխ ժողովու-
րականութիւն է ստացել Պօլսում ի չը-
նորս իւր հէնց վերոյիշեալ խայտառակ
վկայի, ուստի, կամայ ակամայ, մենք գա-
լիս ենք այն տխուր եզրակացութեան
թէ ուրեմն Պօլսեցիք առաւել ևս ան-
ձայակ և անհասկացող են: Այսպէս է
արդեօք:

Գարձեալ «Արեւելք» կըր իւր հէնց
առաջին համարներում հրապարակեց «Բաթի-
կի» մենք մեզ ու մեզ ասացինք՝
հա՛ն թէ ի՞նչ է նշանակում ուրիշի խեղ-
քովը ու խօսքովը շարժիլ և լրագրու-
թեան ամեն մի բեկումն հալած իւրի
տեղ ընդունել: Բայց մենք յոյս էինք
տածում, որ «Արեւելք», վերջ ի վերջոյ,
իւր սխալը կ'ըմբռնէ, կըր «Բաթիկ» Յիշա-
տակարանի» գլխի տպագրեալ օրինակը
աչքից անցկացնէ:

Դուրս է գալիս, որ մենք չարաչար
սխալուած ենք եղել: Որ կ. Պօլսոյ ամ-
բողջ հայ լրագրութիւնը (ինչպէս այն-
տեղից անդադար գրում են մեր լրա-
գիրներին) ամենայն իրաւամբ իւր մեղա-
շնորհն անող՝ մեծադիր «Արեւելք»:
Բաթիկին և նրա «Բաթիկ» թիւնը» իրան
համար մեծ փառք ու պատիւ է համա-
րում: Մեր կողմից լոկ շնորհաւորութիւն
Սակայն և այնպէս շատ հետաքրքիր էր
իմանալ թէ «Արեւելք» խմբագրութիւնը
ամբողջապէս պ. Ա. Արփիարեանից
է կազմուած:

Պ. Ա. Արփիարեանը իւր պերճ գրու-
թիւնը շարունակում է. «Ակնարկ մը տուր
ի Ռուսիա հայ դիտականին (!!!) գրադար-
նին, մտիք հարուստին տունը, այցելէ աղ-
քատին խրճիթը, զնն վիճուորին զօրանցը

կամ վաճառականին խաղաղը, տես երկուս-
տադը, ծերը, աղքիկն ու մանչը, ամեն որ
յախշտակուած է Բաթիկիով»:

Այստեղ մի մեծ ներողութիւն արէք,
պ. Արփիարեան, Գուք ոչ հիմք և ոչ էլ
իրաւունք ունէք ձեր, գուցէ, տաճկա-
հայերի է՞նչ է զայնով (արշին) Ռուսա-
հայերին ևս չափել: Զգուշացէք մանա-
ւանդ նոցա դիտականներին պատիւը
չօղակելուց: Որովհետեւ եթէ գուք չը
գիտէք, գոնէ Ռուսահայք լաւ գիտեն,
որ պ. Բաթիկին բոլոր գրուածքն մէջ,
անխտիր, ոչնչից ոչինչ չը կայ նոցա
գիտականներին համար հետաքրքրելի,
ուր մնաց թէ յափշտակութեան արժա-
նի Գուք, պ. Արփիարեան, աւելի լաւ
կանէք, եթէ մեզ յայտնէք թէ ձեր այդ,
մի առ մի, թուած տեղերն ու անձինք-
ը անձամբ անձին տեսած էք արդեօք:
— Զինք կարծում է, որ մեր կարծիքը, սի-
րելի ընթերցող, պ. Ա. Արփիարեանի
հէնց իրան Վոլովկասից թղթակցու-
թեանց վրայ ենք հիմնում, տպուած
նոյն «Արեւելքում»: Այդ թղթակցութիւն-
ներից տողերիս գրողը տեսնում է, որ
նոցա արդոյ հեղինակը կողկաւ ժամա-
նէկ է կանխակալ կարծիքներով և մուտ
ու ել է ունեցել միմիայն մի որոշ չըր-
ջանի մէջ: Որ նա — թող ներէ մեզ պ.
Արփիարեան — սահմանափակ խելքի ու
զարգացման տէր մարդ է եղել: Ամեն
մի արտաքին, յաճախ խաղաղակի, ու
չնչին երկայնքներով ու տպաւորութիւն-
ներով ողորդուել ու յափշտակուել է:
Այսպէ՛ս պ. Արփիարեանի թղթակցու-
թեանց մեծ մասն ինքը կազմում են
Թիֆլիզում և Էջմիածնում (որ ամբողջ
Ռուսիա չէ) մէկի չէլ մօրուսը և նիհար
երեսը, միւսի դուռն տախտակը, երբոր-
դի խանութ — «ազգեբնու պատիւ բերող»
հրապարակը, չորրորդի բարեկազմ հա-
սակը, հինգերորդի թիկին, ճաշ, պար-
տէզ ու ներշնչման զահաւորակը, վեց-

երրորդի՝ «ազգու յիշոցները» և ուսածո-
պերը և այլն և այլն: Մետալի միւս
կողմը չուս. տանք: «Վոլովկասից թղթակ-
ցութիւններից» մենք տեսնում ենք նը-
մանապէս, որ նրանց աշխոյժ հեղինակը
սատուիկ տրամադրի է դէպ ի պատանե-
կական անձնատպաստանութիւնն ու պո-
ռօստիպօսութիւնը: Որ պ. Ա. Արփիար-
եան շատ է սիրում իւր խելքից վեր
բաների մէջ մտնել և իւր հաղթան ու
որոտընդոտ լինու ու պատգամները տալ
այնտեղ, ուր իւր կողմում, որպէս թղթ-
թակցի, սոսկ տեսնել, լսել և ուսումնա-
սիրել էր — եթէ միայն պ. Արփիարեա-
նի նման մարդիկ կարող են այդ ընդու-
նակութիւնը ունենալ: — Հա՛ն իրաւ, պ.
Արփիարեան սիրում է նա և բաւակա-
նին... տալի:

Բայց դաւանաք դէպ ի պ. Արփիար-
եանի յօդուածը:
Յանուն արդարութեան պէտք է ա-
սենք, որ այդ յօդուածի մէջ երկու հա-
տիկ մտքեր ևս կան, որոնցից առաջինը
մեզ համար բոլորովին նոր է: Ուստի
նախ հէնց այդ միտքը վերցնենք:

Պ. Ա. Արփիարեան «Բաթիկի» Յիշա-
տակարանի հեղինակին համաձայնում է
Ներսէս Պատրիարքի հետ և նրանց գոր-
ծունեութեանց մէջ սերտ նամակութիւն
գտնում ասելով թէ, նրանք «միայն ժո-
ղովրդին զղացմանց ու զաղափարաց ճը-
մարիտ թարգման հանդիսացան»:

«Ակնարկ մը տանք» թէ պ. Արփի-
արեանի համաձայնութիւնը ճիշդն հիմ-
նաւոր է և Ներսէս պատրիարքի համար
պատուաբեր:

Յայտնի է, որ Ներսէս պատրիարքը
արեւելեան վերջին պատերազմի ժամա-
նակ նախ Ռուսիոյ և ապա Եւրօպոյ
միւս մեծ պետութեանց դուռը բաղկեց
և տաճկահայերի համար օգնութիւն
խնդրեց:

— Ի՞նչ հիման վրայ նորին սրբազ-

նութիւնը արաւ այդ քայլը:

— Անուշտ այն հիման վրայ, որ
տաճկահայք ստուարագոյն մասն են
կազմում այն ազգին, որ ունեցել է իւր
անցեալը: Թէ այդ անցեալը մարդկու-
թեան համար օգտակար է եղել, թէ
այդ աղղը, իւր օգտն ու այն բարեմասնու-
թիւններով, արժանի է աւելի լաւ վիճա-
կի, քան այն, ինչ որ նա ունի այսօր:
Ուստի, ասում էր պետութիւններին
նորին սրբազնութիւնը, ուղում էք յա-
նուն մարդասիրութեան, ուղում էք յա-
նուն նոյն իսկ ձեր օգտին, օգնեցէք
այդ ազգին: Ուրիշ, և աւելի պարզ խօս-
քերով՝ Ներսէս պատրիարքը քաղաքա-
կան մուրացկանութեան ձեւաձեւումն ե-
ղաւ:

— Բայց մուրացկանութիւնը նուա-
տացուցիչ բան չէ մեթէ:

— Ոչ միշտ, վասն զի «անճարը կե-
րել է բանջարը»:

— Շատ լաւ, բայց մեր եսական դա-
րում քաղաքական մուրացկանութիւնը
կարող է հետեւանք ունենալ:

— Կարող է ունենալ, կարող է և ոչ,
բայց Ներսէս պատրիարքը այդպէս վա-
րուցեցաւ:

— Սակայն ինչի:

— Ասում եմ էլի: Երեւի նորին սրբ-
ազնութիւնը դիտէր, որ հայ ազգը,
նոյն իսկ իւր պատմական փառաւոր չըր-
ջաններում ևս, մարդկային համաստե-
ղութեան մէջ մի արեգակ չէ եղել, այլ
մի պարզ ու հասարակ մոլորակ: Եւ իւ-
ր մոլորակի այդ մարմինը, իւր յատկու-
թիւններով, իւր ուժով ու արտադրու-
թիւններով, այն է եղել, ինչ որ նրան
ընձեռել, բաշխել են լուսատու ու կին:
ստաւո այս ու այն արեգակը, Թերթի-
ցէք հայ ազգի պատմութիւնը և այս
եզրակացութեան ճշմարտութիւնը գուք
ինքնին էլ կ'ընդունէք:

Արդ՝ եթէ Արշակունիք, Բագրատու-

անդամներին մէջ սերտ կապը պահպանելու համար: Իսկ քաղաքականապէս թոյլ կամ բաժանալ ազգերի մէջ, կապող և միացնող մեծ գերը նա է խաղացել:

Այս մասին մենք կը խօսենք միւս անգամ:

ՅԱՐԳՈՑ ԽՄԲԱԳԻՐ.

«Մեղուի» ներկայ տարոյս 73 թւին մէջ պ. Ս. Ա. խորհրդածութիւնները տեղիք տուին իշխան Ն. Ամատունիին նոյն քաղքի 75 համարում առաջ բերել ինձ հետ ունեցած մի հաշուի խնդիր: Այս խնդիրը հասարակութեանը լուսաբանելու համար կարևոր եմ համարում իշխել, որ 1881 թ. հայ թատրոնական ընդհանուր ժողովը պատուէց ինձ, ընտրելով իշխան Ամատունուն հետ միասին կառավարել հայկական թատրոնը 1881/82 թ., մի գործ որի գոյութիւնը նուիրական էր ինձ համար և որին ծառայելու տաճարը տուր էր ինձ միայն մի միաց, ըստ իմ կարողութեան օգտակար լինել գործին:

Այս զիտաւորութեամբ ես առաջարկեցի իշխան Ն. Ամատունիին նախ և առաջ ուշադրութիւն դարձնել թատրոնի նիւթական կողմին, խնայելով այն ծախսերը, որոնք ի դուր տեղը ծանրանում էին հասարակութեան վերայ, միանգամայն չը վարձել այն դերասանուհիք և դերասաններին, որոց անօգտակարութիւնը նախորդ տարիներէ վտրձը պարզապէս ցոյց տուած էր և որոց մաս նակցութիւնը աւելցնում էր թատրոնի պիւրէիզը երկու հազար ռուբլիով: Բացի այս, սահմանել մի կանոնաւոր հաշու-

պահութիւն թատրոնական եւ և մարի, որուն գրաւոր մասը ես պատրաստակա-նութիւն յայտնեցի ընդունել ինձ վերայ: Այս առաջարկութիւններս ծանօթ են թատրոնի գործին՝ մոտիկ անձնաւորու-թեանց և ինքը իշխան Ամատունին յայտ-նեց ինձ իւր համաձայնութիւնը այսպեա-լութիւ:

Երբ իշխան Ամատունին որոշեց ան-ձամբ Պօլիս երթալ ես այստեղ տուի իրեն 100 տաճկական ոսկի կամ 880 ռ. Պօլսոյ նշանաւոր առևտրական տներու վերայ յանձնարարելով իրեն, վարկ բա-ցի, յորմէ իշխան Ամատունին ստացաւ 300 ոսկի կամ 2580 ռ. և մի այլ տան միջոցաւ ինձ վերայ իւր՝ մէկ փոխգիրն եկաւ 102 ոսկի 67 դ. կամ 887 ռ. 92 դ. որ ես այստեղ վճարեցի: Բնական է որ այս գումարները իշխան Ամատունիի անօրինութեանը յանձնելով ես բացի անմիջական իրաւունքից պարտական էի իբրեւ գործին ընկերակից պահանջել այս գրամներու ծախսի հաշիւը, որպէս զի իմանամ մէկ կողմէն իմ գրամական մասնակցութեանն չափը և միւս կողմից թէ իշխալ գումարները ինչ կապ ունին թատրոնին պէտքերի հետ. մասնաւոր որ այդպիսի մի խոշոր գումարների ծախ-սուելուն Պօլսոյ մէջ թատրոնի համար ընաւ պէտք չըկար: Հակառակ իմ ան-ընդհատ սակարկումներին ինձ չը յաջողուեց իշխան Ամատունուց այս առթիւ հաշիւ ստանալ: Միևնոյն ժամանակը դժբախ-տաբար նկատեցի որ իշ. Ամատունին հրաւիրել է այն դերասանուհիներին և դերասանին որոնց խոտաբան էր չը-հրաւիրել. բացի սորանից, իշխանին ասե-լով, սուք կանոնաւոր ամսական ռոճիկ ստանալու չէ՛ք այլ հրաւիրուած է՛ք իբրեւ թէ այն պայմանով որ՝ ամէն մեկ ներ-կայացման, որոնց մասնակցին, որոշ վար-ձաւորութիւն առնուն. իսկ ինչպէս յետոյ

յայտնուեցաւ նոքա ես ամսական ռոճիկով է՛ք վարձուած ինչպէս այլ: Այս ամենի հետ մէկտեղ տարուայ առաջին բաժնում մի քանի առիթներով իշխան Ամատունիի հետ թատրոնի այլ հիմնական խնդիրնե-րու մասին մեր մէջ կարծեաց տարա-ձայնութիւններ առաջանալով ևս հրա-ժարուեցայ թատրոնի մասնաժողովի ան-դամ լինելուց. անկարող համարելով ինձ իշխան Ամատունիի անօրինութեանց ա-ռաջին առնել:

Թատրոնական ժողովի իւր տարեկան նիստի մէջ ես պարտք համարեցի հաշիւ տալ իմ հրաժարուելու պատճառների մասին. իշ. Ամատունին չը պատասխա-նեց իմ նկատողութեանցս այլ յայտնեց որ «ինքն իրան պարտաւոր չէ համարել պ. Մութաֆեանին հաշիւ տալու և խոր-հրդակցելու նորա հետ թէ թատրոնի կառավարութեան մասին, թէ դերասա-նիւր՝ վարձելու և թէ ծախսից հաշիւ տա-լու վերաբերութեամբ». որովհետեւ պ. Ամատունիի ասելով նա ընտրուած է և-ղել իբրեւ միակ տնօրէն կառավարելու թատրոնը: Պ. Ամատունիի այս խօսքե-րուն ոմանք ներկայ եղողներէց նկատե-ցին, որ պ. Մութաֆեանց ընտրուած է եղել ժողովի կողմից իրեն իշխան Ա. Ամատունիին համահաւասար իրաւունքնե-րով և որ այդպէս պ. Մութաֆեանը չէր ընդունել այդպիսի մի պաշտօն: Պ. Արզար Բովհաննիսեանցը հարց առա-ջարկեց իշ. Ամատունուն թէ «ինչպէս պէտք է բացատրել այս փաստը, որ դուք չ'ընդունելով պ. Մութաֆեանի միջամտութեան իրաւունքը այնուամե-նայնիւ օգտուում էք նորա գումարնե-րով»: Այս հարցին իշ. Ամատունին պա-տասխանեց թէ իւր հաշիւ չը տալու պատճառն այն էր, որ պ. Մութաֆեա-նից առնուած գումարները իւր անձնա-կան պարտքն է համարում, որ

նա պարտական է վերադարձ-նելու:

Աւելորդ եմ համարում այս առթիւ ուրիշ բացատրութիւններ տալ, այլ խո-նարհաբար հրաւիրում եմ թէ պ. Ար-զար Բովհաննիսեանցին և թէ թատրո-նական ժողովիս ներկայ եղողներէց, ո-րոց չարքում մտաբերում եմ, պպ. Մեք, Թաւադեանցին, Մ. Թաւադեանցին, Խաչատուրեանցին, Ն. Միրզոյեանցին, Ս. Ղորղանեանցին. Թաւոր Տէր-Յովհան-նիսեանցին և այլոց հրապարակաւ վե-րականջել իրողութիւնը:

Մի նկատողութիւն ևս. իշ. Ամատու-նին դառնապէս սխալվում է, կարծելով որ այս խնդիրը հասարակութեան ա-ռաջ փաստաբանելու նպատակաւ դիմած եմ պ. Ս. Ա. ին, որուն հետ տարիէն ա-ւելի խօսելու անգամ առիթ չեմ ունե-ցած: Թողնում եմ այլոց իրենց գործե-րը փաստաբանների կամ իրաւաբաննե-րի միջնորդութեամբ վերջացնել. իսկ ինչ որ վերաբերում է իշ. Ամատունիի նամակի այս մասին թէ ամենք (1) կը գտնենք դարձել այդ գումարը ինձ վե-րադարձնելու համար» ես անտեղի համարձակութիւն եմ համարում պարոն Ամատունիի կողմից, քանի որ ինքը չի պիտի մոռանայ, որ նախ քան իրեն աղբիւր գտնելը ես եղալ ի-րեն աղբիւր գտնողը, յորմէ օգտուելով այսօր իւր ինձ ունեցած անձնական 1125 ռ. 32 գ. պարտքը հասարակու-թեան վերայ տքնում է բաւալ:

Վարձաւ Մութաֆեան.
Թիֆլիս 4-ին հոկտ. 1884 թ.

ԻՄ ՀԱՄԱՐՈՑ ՊԱՏԱՍԽԱՆԸ.

Հրէութեան հերոսների տաճը
Թէ օրը հրէան նոր բան չը գիտէ:

Հինն է կրկնում. կատարելապէս վե-րաբերել է «Արձագանքին» կամ նո-րա պաշտօնական խմբագիր պ. Արզար Բովհաննիսեանցին: Գոխա-նակ լըջօրէն և խնայելի կերպով դի-մելու մեր «Երկու խօսքերին» «Արու-սովորութիւններով» որ կովկասու գրականութիւնն իրաւամբ արդէն մկրտել է «օյնրադ-մասխարութիւն» մականունով: Մենք միանգամայն բա-ւականանում ենք այն դատաւճռով որ «Արձագանքին» ընթերցողները ար-ձակեցին. յիշեալ «մասխարութեան» մասին և արհամարհելով դայրա-ցան: Թող մենք լինինք «անկոչ-փաստաբան» բայց և այնպէս մենք հարկադրուած կը լինինք պաշտպա-նելու պ. Արզար Բովհաննիսեանցին, եթէ սա) արգարադատութեան ներ-կայանայ, ինչպէս մենք հարկադրուած եղել ենք պաշտպանելու շատերին: Թող մենք դարձեալ դուրս եկած լինինք անյայտութիւնից) այնու ա-մենայնիւ մենք ապարդիւն և ա-պերախտ աշխատութիւն ձեռք ա-ռած կը լինինք) եթէ քննենք պ. Արզար Բովհաննիսեանի ցեղագրու-թիւնը: Թող վերջապէս Վարամբե-նի խօսքերը «Արձագանքը» մեզ վե-րաբերէ) բայց և այնպէս թողը ա-ւելի մաքուր է) քան ցեղը և ապա-կանութիւնը որոյ մէջ թաթա-խում է պ. Արզար Բովհաննիսե-անց) իւր գրիչը հրապարակաւ մաղձը և զայրոյթը շարժելու հա-

նիք և Ռուբինեանք մուրալներ էին, այժմեան Շատախիքը ու Վասպուրա-նիքը, օրինակ, հօ չեն արձակ մէկ զլուխ արեգակ դառնալ: Ինչ ասել կու-զի, որ արեգակ լինելը նախապատիւ է քան—մուրալի, բայց պատմական օրէնք-ները յեղաշրջելու միջեւ ձեռնհաս են մարդիկ:

Այս խօսքերից թող մեր ընթերցող-ները չը զայթաղվին, ոչ էլ բարեմիտ-ները—մտաբանել լինին: Այսպէս խօսե-լով մենք (մեր կարծիքով) ոչ մեր ազգին նախատում ենք և ոչ էլ ուրիշներին վե-հատեցնել ցանկանում, ոչ: Այլ մենք ուզում ենք նրանց յիշեցնել փիլիսո-փայի այն յաւիտեան ճշմարիտ խօսքե-րն թէ՛ «ճանիւր դըքը». Մենք կարծում ենք, որ, ինչպէս իւրաքանչիւր անհատ, նոյնպէս և իւրաքանչիւր ազգ, կարող չէ ոչ իւր ներկան խաղաղութիւն և ոչ էլ լուս ապագայի ակնկալել, եթէ որ ինքն-իրան չէ ճանաչում. Եւ մեր աչքում խաղաղութեան մէջ ամենամեծ և տգէտ-ների մէջ ամենամոտանգաւոր մի ազգի առաջնորդը (լինի նա Ներսէս սրբազան կամ Բաֆֆի լիպտաման) նա է, ով ազ-գին սխալ, կեղծ ու պատիւր ճանապար-հի մէջ կը դնէ, և սին յայտնելով կը մոռցնան նրան: Այդ անբնական ճանա-պարհը երբեմն ցանկալի հետեանք կու-նենայ, բայց դա առ երկուսի է, դա մի միւրած է: Մեծ վատաւիները, փոքր աշ-խատութիւններով ձեռք չեն բերվում, որովհետեւ ընտելեան մէջ թղթախաղե-րի ձեռնածուկները, քաղղի խաղերը կա-րող չեն երբէք տեղի ունենալ: Եւ, ա-զան կամ անազան, գաղտնիքը կը բա-ցուի և յանցաւորը, միամիտը կը տու-ժէ:

«Ներքե սասանի երկիր (սոսայ եկե-ղեցւոյ հայրերից միւրը, Գովհան խաւա-տաւորը) և ի չորրորդին ոչ կարէ հան-գարտիլ, եթէ ծառայ թաղաւորեցէ,

աղախին կալցի զտեղի տիկնոջ, յիմա-րն յաղեացի հացիւ և տղէտն զտեղի կալցի խաւաւորոյն»:

— Ներսէս արքայիսկողմով Վարժա-պետեան— փառք ու պատիւ նրան— անքան հմուտ և գործնական մարդ գտնուեցաւ, որ իւր կուսմն ու դիրքը դէպ ի չարը չը գործածեց: Նորին սըը-բազնութիւնը իւր գործունէութիւնը, թէ և համեստ, սակայն որոշ, ընտելեան և հնարաւոր չըլնանակի մէջ ամբողջից:

Ումանք ստանդարտիցից այդ չըլնա-կը շատ նեղ համարեցին, այլը—չատ լայն: Դա նոյն իրաւունքն է: Շատ կա-րելի է, որ ուղիղ գրանցից մէկը կամ միւսը լինի: Սակայն Ներսիսի գործու-նէութիւնը այն է, ինչ որ յիշեցինք:

Եւ որովհետեւ իւր պաշտան պատրի-արքին հետ ձայնակից և գործակից, զա-ռաւ տաճկահայ ռոգեւորակներն ու աշ-խարհակներին ստաւարադոյն մասը, ուս-տի մենք պ. Արքիարեանի հետ միան-գամայն համամիտ ենք, որ Ներսէս պատրիարքը, այն, «ժողովուրդին զգաց-մանցն ու զազաւարաց ճշմարիտ թարգ-ման հանդիսացաւ»:

Ամեն ոք այս դիտէ և վկայում է, բայց գուցէ ամեն ոք չը դիտէ նմանա-պէս և չէ յիշում մի կէտ ևս, որ Ներ-սիսի գործունէութեան մէջ ի յայտ ե-կաւ: Մեր խօսքը նորին սրբազնութեան այն մասնաւոր, ստիլ բարեկամական նու-մանքների մասին է 3), որոցմով Ներսէս պատրիարքը, Գարեգին վ. Սրբանձ-տեան իւր մտերմի միջոցաւ, հրաւիրում էր տաճկահայ տաղաւոր, և թեպէտ բարեմիտ, սակայն անորոճ երկտաւար գովութիւնը՝ իւր ծայրահեղութիւններով իւր (Ներսիսի) հանդէպ խոչընդոտներ չը հանել, և իւր ձեռնարկած գործը չը խանդարէլ:

1) Եթէ մենք չենք սխալվում նամակ-ները «Մշակումը» տպուեցան.

Կարելի է (մենք նորից կրկնում ենք) որ Ներսէս պատրիարքը այս դէպքում եւ սխալուեցաւ: Բայց եթէ դուք ընդու-նում էք, որ այդ մարդը խոհեմ ու քաղաքագէտ անձն է, յայն դէպս ըն-դունեցէք և այն, որ նա առանց հի-մունքի, առանց էական չարագործի չէր գրում վերաբերել նամակները:

Արդ՝ պ. Արքիարեան, կամ ո ոք և ինչէ, երբ հարկաւոր է համարում Ներ-սէս պատրիարքը Բաֆֆիի հետ համե-մատել, նրանց գործունէութեանց դու-րակիւնը կազմել, պարտաւոր է այդ գործունէութեանց, դրանց գործադրման եղանակների բոլոր պարագաները ի հա-շիւ առնել: Հակառակ դէպքում համե-մատութիւնը անտեղի է:

Մենք ընդունում ենք, որ Ներսիսի և Բաֆֆիի գործունէութեանց գաղափա-րական մասը կարող է նման լինել: Նոյնը լինել, մի և նոյն վախճանական նպատակը ունենալ: Բայց այդ դեռ բա-ւական չէ: Բանը գաղափար յայտնելու-մը չէ միմիայն, այլ նաև, և զլիսաւորա-պէս, այդ գաղափարը պաշտպանելուն ու իրագործելուն է: Ապա թէ ոչ շատ գաղափարներ կան աշխարհում, որոնք, ինքն ըստ ինքեան, շատ վտանգ են և ա-մենքի համար էլ հաւատարմաւոր ցան-կալի: Բայց երբ այդ գաղափարը չի պաշտպանուի, չի իրագործուի այնպէս, ինչպէս հարկն է, այն ժամանակ ամեն աշխատանք ի զուր է, ապարդիւն և մինչև իսկ վնասակար:

Այժմ անհնար թէ պ. Բաֆֆին ինչ ու ինչ ճանապարհներով կամենում էր տաճկահայ ժողովուրդին դէպ ի Աւետեաց երկիրը առաջնորդել:

Բայց նախապէս պէտք է ասենք, որ դոնեա մեզ համար, բոլորովին պարզ է և անյայտի այն հանգիս դատարկու-թիւնը, այն առանց որոշ իդէալի ան-դունել, որին պ. Բաֆֆի սիրահարները

սովոր են հայրենասիրութիւն և նոյննակ-ցաց բողոքաւորութիւն անունով մկրտել առ հասարակ: Եւ այդ բանը—մենք համե-ղում ենք—առաջնաւոր է «մեր տա-ղանդաւոր վիպաւանի», այսպէս ասած, բարեպաշտական-մարդասիրական զգաց-մունքներից և, նա մասնաւոր, նրա զոդորիկ ու խաղաղիկ լեզուից, ոճից, որոնք, սակայն, ամենամեծ մասամբ, հայկական չեն: Պ. Բաֆֆիի այդ արժա-նատրութիւնները մենք տեսել ենք Պա-րսկաստանի և Տաճկաստանի՝ և՛ աչքը ու դերվիշների, ևս ես բոլոր ու բամբակ գող ճիւղաւորաց պառաւանքի մէջն էլ: Ուստի պ. Բաֆֆին համեմատել ենք, և զարձեւալ համեմատում ենք, հէնց այդ տեսակ գործիչների հետ, եթէ միայն դրանք էլ գործիչ եր են:

Դառնանք խնդրոյն:

Ուրիշ առիթներում մենք այդ ճանա-պարհները մի առ մի Բաֆֆիի վէպե-րից հանելով ցոյց ենք տուել մեր ըն-թերցողներին: Այս անգամ դրանց մանրամասն պատկերը միմիայն ցոյց կուտանք և՛ պ. Արքիարեանին:

Տաճկահայերին փրկելու համար, պ. Արքիարեան, պ. Բաֆֆին նախ և ա-ռաջ այդ ժողովուրդի մէջ ոչ մի օգտա-կար, փոքր ի շատէ բանի պիտանացու տարր չէր գտնում բացի ամբիւնից, որը, մի և նոյն ժամանակ, նրա աչքում մարդ-կութեան նշան չուներ վրան, վասն զի որը էր, ճճի էր, աղը էր և այլն: Ուրե-մըն Բաֆֆիի համար տաճկահայ ժողո-վուրդը չը կար խաղաղաւ: Բայց ինչ էլ որ լինի, եղածովն ևս, կամայ ակամայ, դո՛ւ մնալով պ. Բաֆֆին պահանջում էր, որ հայ կրօնի ու իրաւաւոր վերա-նայ, ջնջուի, հայի խաչը հայ ամբիւնի ձեռքով հրացանաձիգ լինի («Այս ձեռքով եր »): Պ. Բաֆֆին ու աւետարանի այս կամ այն վարդապետութիւնը «յիմարու-թիւն» անուանելով, տաճկահայերի մի-

ալ փրկութիւնը Մուհամմէդի Ղուամի մէջն էր գտնում, խաղաւ մուսալայով, որ Ղուամի աղեցնութեան տակ կըր-թուած ժողովուրդի դէմ էին իւր բողոքը, իւր բոլոր ճիշ ու կանոն, Պ. Բաֆֆին, ժամանակակից ուսման, կրթութեան, քաղաքական (որոյ մէջն է, դժբաղա-բար, և՛ «Արեւելք») և առ հասարակ լուսաւորութեան ամեն մի ֆալտորի օ-գուտը բացէ ի բաց մերժում էր, իս-պառ մուսալայով դարձեալ, որ իւր դրած ու գրելիք վէպերն ուսման և լուս-աւորութեան անմիջական հետեանքն էին: Պ. Բաֆֆին իւր անձնական հա-մողմունք, ցանկութիւն ու ցնորքները «ամենայն մոլեւաւորութեամբ», բռնա-զբոսաբար, տքնում էր տաճկահայ ժո-ղովրդի վրէն փաթաթել:

Պարոն կամ մտացածին, կամ առ առաւել, օտար կեանքի, օտար ընկե-րականութեան ու, թէկուզ, լուսաւորու-թեան տիպերով (կարծեցեալ) կամենում էր հայ կեանքը ձեռաց յեղաշրջել: Ուս-տի այդ կեանքի անմիջական հետեանքն էր ձեռնադրով, լեցնում էր հայի՝ դեռ չը կաղմակիրպուած ու չը պնդացած ստա-մաքսն ի վեր, յատկապէս այն նպատա-կաւ, որ այդ ստամբարը պատառուի, թունաւորուի և մարդը մահանայ և այլն և այլն: Մի խօսքով, պ. Արքիարեան, պ. Բաֆֆին միակ նշանաբանն էր ձե-ռաց, իսկոյն, անպատճառ մինչև պատե-րազմի վերջնաւոր, քանդել, աւերել, ոչն-չացնել ամեն բան, ինչ որ տաճկահայը ունի և իրան համար սուրբ է և պատա-պարիչ:

Բաֆֆիի բոլոր վէպերի ձգտումը հե-տեկալ ծթած և հրէշաւոր կէտի չորսն է միմիայն պոռոյ դալի,—օմնիքս որ մի ծառ արմատիցը չը կտրես, նրա տեղ մին ուրիշը չես կարող տնկել» (Խաչ, Յիշատ):

Արդ՝ չեղտելով հարցնում ենք մենք պ. Արքիարեանից՝ այս ամենը միթէ

